# Արձանագրություն N 3

## «ԵԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/12» *ծածկագրով* գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի ամփոփման նիստի

Պատվիրատուի անվանումը ` Երևանի << Արաբկիր>> ԱԿ ՓԲԸ հայտերի ամփոփման նիստի օր` 27.05.2026թ.

Գտնվելու վայրը ` ք. Երևան, Հր. Քոչար 21 հայտերի ամփոփման նիստի ժամ` 11:00

Մասնակցում էին` **Հանձնաժողովի նախագահ**` Ի. Քեխյան

**Հանձնաժողովի անդամներ**` Մ. Կարապետյան, Լ. Գյլյան

**Հանձնաժողովի քարտուղար**` Հ. Գևորգյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>> - ի /այսուհետև` Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված:*

Օրակարգ

Ընթացակարգի հայտերի ամփոփման մասին

*Հանձնաժողովի նախագահ` Ի. Քեխյան*

1. ***Առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցների հետ բանակցությունների վարման վերաբերյալ.***

1.1 Գնային առաջարկի նվազեցում չի եղել.

2. ***Մերժված հայտերի և գնման պահանջի վերացման, չկայացած չափաբաժինների մասին.***

2.1 Հանձնաժողովի կողմից մերժված հայտեր չեն եղել,

2. 2 Հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 40-րդ հոդվածի 5-րդ ենթակետի է. պարբերությամբ և "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ պարբերությունը գնահատող հանձնաժողովի անդամները միաձայն որոշեցին գնման ընթացակարգի «2,3,5,6,7» չափաբաժինները համարել չկայացած:

3. ***Գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակիցների մասին***`

3.1 Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած Մասնակիցների գնային առաջարկները և հանձնաժողովը որոշեց նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և տեխնիկական բնութագրին համապատասխանող, ինչպես նաև հիմք ընդունելով նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 13.10.2022թ.N 1593-Ն որոշման 40-րդ կետի 6-րդ ենթակետը հաղթող ճանաչել հետևյալ Մասնակիցներին`

- « Ս և Գ գրուպ » ՍՊԸ - 1
- « Երմեդ » ՍՊԸ - 4

3.2 << Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն է սահմանվում անգործության ժամկետը,

3.3 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկը ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ ------------------------------ Ի. Քեխյան

Անդամներ ------------------------------ Մ. Կարապետյան

------------------------------ Լ. Գլջյան

Հանձնաժողովի քարտուղար ------------------------------ Հ. Գևորգյան